

**Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1999 թվականի դեկտեմբերի 13-ի 1999/95/ԵՀ հրահանգ**

**Համայնքի նավահանգիստներ մուտք գործող նավերի վրա աշխատող ծովագնացների  
աշխատաժամերի վերաբերյալ դրույթների կատարման մասին**

*Պաշտոնական տեղեկագիր L 014 , 20.01.2000թ., էջեր 0029 - 0035*

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը եւ, մասնավորապես, դրա 80(2) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (2),

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան (3),

Քանի որ

1) սոցիալական քաղաքականության ոլորտում Համայնքի գործունեությունը նպատակաուղղված է, մասնավորապես, աշխատողների առողջության պահպանմանն ու անվտանգության ապահովմանը՝ իրենց աշխատանքային միջավայրում,

2) ծովային տրանսպորտի ոլորտում Համայնքի գործունեությունը նպատակաուղղված է, մասնավորապես, նավի վրա ծովագնացների կյանքի եւ աշխատանքային պայմանների բարելավմանը, նրանց անվտանգության ապահովմանը՝ ծովում, ինչպես նաեւ ծովում տեղի ունեցող վթարների պատճառով աղտոտման կանխմանը,

3) Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (ԱՄԿ) 1996 թվականի հոկտեմբերի 8-22-ը կայացած իր ութսունչորսերորդ նիստի ընթացքում ընդունեց «Ծովագնացների աշխատաժամերի եւ նավերի աշխատակազմերի համալրման մասին» ԱՄԿ 1996թվականի թիվ 180 կոնվենցիան, (այսուհետ՝ «ԱՄԿ թիվ 180 կոնվենցիա») եւ «Առետրային նավագնացության մասին (նվազագույն չափորոշիչներ)» 1976 թվականի կոնվենցիային կից արձանագրություն (այսուհետ՝ «ԱՄԿ թիվ 147 կոնվենցիային կից արձանագրություն»),

4) «Եվրոպական համայնքի նավի սեփականատերերի ասոցիացիայի եւ տրանսպորտի ոլորտում աշխատողների՝ Եվրոպական միությունում գործող միությունների ֆեդերացիայի միջեւ՝ ծովագնացների

աշխատաժամերի կազմակերպման վերաբերյալ կնքված համաձայնագրի մասին» Խորհրդի 1999 թվականի հունիսի 21-ի 99/63/ԵՀ հրահանգը, որն ընդունվել է Պայմանագրի 139(2) հոդվածի համաձայն, նպատակաուղղված է 1998 թվականի սեպտեմբերի 30-ին կնքված նշված համաձայնագիրն ուժի մեջ դնելուն (այսուհետ՝ «համաձայնագիր»), համաձայնագրի բովանդակությունն արտացոլում է ԱՄԿ թիվ 180 կոնվենցիայի որոշ դրույթներ, եւ համաձայնագիրը կիրառվում է ցանկացած՝ պետական կամ մասնավոր սեփականություն հանդիսացող ծովային այն նավերի վրա աշխատող ծովագնացների նկատմամբ, որոնք գրանցված են որեւէ անդամ պետությունում եւ սովորաբար ներգրավված են առետրային գործունեության մեջ,

5) սույն Հրահանգի նպատակը 1999/63/ԵՀ հրահանգի այն դրույթների կիրարկումն է, որոնք արտացոլում են ԱՄԿ թիվ 180 կոնվենցիայի դրույթները Համայնքի նավահանգիստ մուտք գործող ցանկացած նավի առնչությամբ, անկախ այն բանից, թե որ դրոշի ներքո է այն նավարկում, ինչպես նաեւ ծովագնացների անվտանգությանը եւ առողջությանը ակնհայտորեն վտանգ սպառնացող իրավիճակը բացահայտելն ու այն շտկելը, սակայն 1999/63/ԵՀ հրահանգը ներառում է այնպիսի պահանջներ, որոնք հնարավոր չէ գտնել ԱՄԿ թիվ 180 կոնվենցիայում եւ որոնք այդ պատճառով ենթակա չեն կատարման անդամ պետության դրոշի ներքո չնավարկող նավերի դեպքում,

6) 1999/63/ԵՀ հրահանգը կիրառվում է անդամ պետության տարածքում գրանցված ցանկացած ծովային նավի վրա աշխատող ծովագնացների նկատմամբ, անդամ պետությունները պետք է վերահսկեն իրենց տարածքում գրանցված նավերի առնչությամբ նշված հրահանգի բոլոր դրույթների հետ համապատասխանության ապահովումը,

7) անվտանգության ապահովման եւ մրցակցության խաթարման դեպքերից խուսափելու նպատակով անդամ պետություններին պետք է թույլ տրվի ստուգել իրենց նավահանգիստներ մտնող բոլոր ծովային նավերի առնչությամբ 1999/63/ԵՀ հրահանգի համապատասխան դրույթների հետ համապատասխանությունը՝ անկախ այն պետությունից, որտեղ դրանք գրանցված են,

8) մասնավորապես, այն նավերի նկատմամբ, որոնք նավարկում են ԱՄԿ թիվ 180 կոնվենցիայի կամ ԱՄԿ թիվ 147 կոնվենցիային կից արձանագրության կողմ չհանդիսացող պետության ՚ի ներքո, չպետք է դրսեւորվի ավելի բարյացակամ վերաբերմունք, քան այն նավերի նկատմամբ, որոնք կրում են կա՛մ կոնվենցիայի, կա՛մ արձանագրության, կա՛մ միաժամանակ երկուսի կողմ հանդիսացող պետության դրոշը,

9) 1999/63/ԵՀ հրահանգի արդյունավետ կիրարկումը վերահսկելու համար անհրաժեշտ է, որպեսզի անդամ պետությունները, հատկապես նավապետի, անձնակազմի որեւէ անդամի, ցանկացած անձի կամ

նավի անվտանգ շահագործման առումով, օրինակ՝ շահ ունեցող կազմակերպության կողմից բողոքն ստանալուց հետո նավերի վրա ստուգումներ իրականացնեն՝ նավի վրա կյանքի եւ աշխատանքային պայմանները բարելավելու կամ աղտոտումը կանխելու համար,

10) սույն Հրահանգի նպատակներով՝ անդամ պետությունները սեփական նախաձեռնությամբ կարող են, անհրաժեշտության դեպքում, նշանակել Համայնքի նավահանգիստներ մտնող նավերի վրա պետական վերահսկողություն իրականացնող տեսուչների,

11) ապացույց, որ նավը չի համապատասխանում 1999/63/ԵՀ հրահանգի պահանջներին, կարելի է ձեռք բերել աշխատանքային պայմանավորվածությունների եւ ծովագնացների աշխատաժամերի կամ հանգստի ժամերի մասին գրառումներից, կամ այն դեպքում, երբ տեսուչը հիմք ունի կարծելու, որ ծովագնացները գերհոգնած վիճակում են,

12) նավի վրա առկա եւ անվտանգությանը կամ առողջությանը վտանգ սպառնացող ցանկացած պայման շտկելու նպատակով այն անդամ պետության իրավասու մարմինը, որի նավահանգիստ է մտել այդ նավը, կարող է արգելել նավահանգիստը լքելը, քանի դեռ չեն շտկվել բացահայտված թերությունները կամ քանի դեռ անձնակազմը բավականաչափ չի հանգստացել,

13) 1999/63/ԵՀ հրահանգն արտացոլում է ԱՄԿ թիվ 180 կոնվենցիայի դրույթները, երրորդ երկրի տարածքում գրանցված նավերի առնչությամբ այդ հրահանգի դրույթների հետ համապատասխանության ստուգումը կարող է տեղի ունենալ միայն սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

### *Հոդված 1*

#### **Նպատակը եւ գործողության ոլորտը**

1. Սույն Հրահանգի նպատակն է անդամ պետությունների նավահանգիստներ մուտք գործող նավերի մասով 1999/63/ԵՀ հրահանգի հետ համապատասխանության ստուգման եւ ապահովման համար մի մեխանիզմի նախատեսումն է, որը կբարելավի ծովային անվտանգությունը, աշխատանքային պայմանները, ինչպես նաեւ ծովագնացների առողջության պահպանումն ու անվտանգության ապահովումը՝ նավի վրա:

2. Անդամ պետություններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում՝ ապահովելու համար, որպեսզի այն նավերը, որոնք գրանցված չեն իրենց տարածքում, կամ չեն նավարկում իրենց դրոշի ներքո, համապատասխանեն 1999/63/ԵՀ հրահանգին կցված համաձայնագրի 1-12-րդ դրույթներին:

## Հոդված 2

### Սահմանումները

Սույն Հրահանգի իմաստով.

ա) «նավ» նշանակում է ցանկացած՝ պետական կամ մասնավոր սեփականություն հանդիսացող ծովային նավ, որը սովորաբար ներգրավված է առետրային գործունեության մեջ: Ձկնորսական նավերը չեն ընդգրկվում սույն սահմանման մեջ.

բ) «իրավասու մարմին» նշանակում է անդամ պետությունների կողմից նշանակված այն իրավասու մարմիններին, որոնք պետք է գործառույթներ իրականացնեն՝ սույն Հրահանգի համաձայն.

գ) «տեսուչ» նշանակում է պետական հատվածի աշխատող կամ այլ անձ, ով անդամ պետության իրավասու մարմնի կողմից պատշաճորեն լիազորված է աշխատանքային պայմանների ստուգում իրականացնել նավի վրա եւ հաշվետու է այդ իրավասու մարմնին.

դ) «բողոք» նշանակում է անձնակազմի անդամի, մասնագիտացված մարմնի, ասոցիացիայի, արհեստակցական միության կամ սովորաբար նավի անվտանգությանը, այդ թվում՝ դրա անձնակազմի անվտանգության ապահովմանը եւ առողջության պահպանմանը հետաքրքրված անձի կողմից ներկայացված որեւէ տեղեկություն կամ հաղորդում:

## Հոդված 3

### Հաշվետվությունների կազմումը

Չհակասելով 1(2) հոդվածին՝ այն դեպքում, երբ անդամ պետությունը, որի նավահանգիստ ինքնակամ՝ գործունեության բնականոն ընթացքի ժամանակ աշխատանքային նկատառումներով մուտք է գործում որեւէ նավ, բողոք է ստանում, որը նրան ակնհայտորեն անհիմն չի թվում կամ երբ նա փաստեր է ձեռք բերում, որ նավը չի համապատասխանում 1999/63/ԵՀ հրահանգում նշված ստանդարտներին, ապա այն կազմում է հաշվետվություն՝ ուղղված այն երկրի կառավարությանը, որում գրանցված է նավը, եւ երբ 4-րդ հոդվածով նախատեսված ստուգումն անցկացնելուց հետո ձեռք են բերվում համապատասխան ապացույցներ, անդամ պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում՝ ապահովելու համար, որպեսզի շտկվի նավի վրա առկա եւ անձնակազմի անվտանգությանն ու առողջությանը բացահայտ սպառնացող ցանկացած պայման:

Հաղորդում կամ բողոք ներկայացնող անձի ինքնությունը չպետք է բացահայտվի համապատասխան նավի նավապետի կամ սեփականատիրոջ մոտ:

#### Հոդված 4

### **Ստուգումը եւ ավելի մանրակրկիտ ստուգումը**

1. Նավի վերաբերյալ՝ 1999/63/ԵՀ հրահանգի պահանջներին չհամապատասխանելու առնչությամբ ապացույցներ ձեռք բերելու համար անցկացվող ստուգման ժամանակ տեսուչը պետք է որոշի արդյոք՝

-նավի վրա գործող աշխատանքային պայմանավորվածությունների մասին նշում պարունակող աղյուսակը կազմված է նավի աշխատանքային լեզվով կամ լեզուներով եւ անգլերենով՝ I հավելվածում նշված կամ դրան համարժեք ձեւանմուշի համաձայն եւ արդյոք այն փակցված է նավի վրա՝ հեշտ հասանելի վայրում.

-ծովագնացների աշխատաժամերի եւ հանգստի ժամերի մասին գրառումները կազմվել են նավի աշխատանքային լեզվով կամ լեզուներով եւ անգլերենով՝ I հավելվածում նշված կամ դրան համարժեք ձեւանմուշի համաձայն ու պահվում են նավի վրա եւ արդյոք ապացույց գոյություն ունի այն մասին, որ դա հաստատվել է այն պետության իրավասու մարմնի կողմից, որտեղ գրանցված է նավը:

2. Եթե բողոք է ստացվել կամ տեսուչը նավի վրա սեփական դիտարկումների արդյունքում ունի այն համոզմունքը, որ ծովագնացները հնարավոր է, անհիմն կերպով շահագործվել են, ապա տեսուչը, 1-ին պարբերության համաձայն, իրականացնում է ավելի մանրակրկիտ ստուգում՝ որոշելու համար՝ արդյոք գրանցված աշխատանքային եւ հանգստի ժամերը համապատասխանում են 1999/63/ԵՀ հրահանգով սահմանված ստանդարտներին եւ որ դրանք պատշաճորեն ուսումնասիրվել են՝ հաշվի առնելով նավի շահագործման վերաբերյալ մյուս գրառումները:

#### Հոդված 5

### **Թերությունների շտկումը**

1. Այն դեպքում, երբ ստուգման կամ ավելի մանրակրկիտ ստուգման արդյունքում բացահայտվել է, որ նավը չի համապատասխանում 1999/63/ԵՀ հրահանգի պահանջներին, ապա անդամ պետությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որպեսզի շտկվի ծովագնացների անվտանգությանը եւ առողջությանը բացահայտ սպառնացող ցանկացած պայման: Նման միջոցները

կարող են ներառել նավահանգիստը լքելն արգելելը, քանի դեռ չեն վերացվել թերությունները կամ դեռևս բավարար չափով չեն հանգստացել ծովագնացները:

2. Այն դեպքում, երբ հստակ ապացույց կա, որ առաջին կամ դրան հաջորդող հերթապահության հերթափոխային անձնակազմը գերհոգնած վիճակում է, ապա անդամ պետությունն ապահովում է, որպեսզի նավը չլքի նավահանգիստը քանի դեռ չեն շտկվել բոլոր հայտնաբերված թերությունները կամ քանի դեռ բավականաչափ չեն հանգստացել տվյալ նավի ծովագնացները:

### *Հոդված 6*

#### **Հետագա գործողությունները**

1. Այն դեպքում, երբ 5-րդ հոդվածի համաձայն արգելվել է, որ նավը լքի նավահանգիստը, ապա անդամ պետության իրավասու մարմինը նավապետին, սեփականատիրոջը կամ օպերատորին, դրոշի պետության կամ նավի գրանցման պետության կառավարման մարմիններին, կամ հյուպատոսին կամ նրա բացակայության դեպքում պետության՝ ամենամոտ գտնվող դիվանագիտական ներկայացուցչին իրազեկում է 4-րդ հոդվածում նշված ստուգումների արդյունքների կամ տեսուչի կողմից կայացված ցանկացած որոշման եւ, անհրաժեշտության դեպքում՝ պահանջվող ուղղիչ գործողությունների վերաբերյալ:

2. Սույն Հրահանգի համաձայն՝ ստուգում իրականացվելու դեպքում պետք է գործադրվեն բոլոր հնարավոր ջանքերը՝ նավի անհարկի ուշացման դեպքերից խուսափելու համար: Այն դեպքում, երբ նավն անհարկի ուշանում է, ապա սեփականատերը կամ օպերատորն իրավունք ունեն փոխհատուցում ստանալու իրենց կրած ցանկացած կորստի կամ վնասի համար: Ենթադրվող անհարկի ուշացման ցանկացած դեպքի համար նավի սեփականատերը կամ օպերատորը պարտավորվում են ապացույցներ տրամադրել:

### *Հոդված 7*

#### **Բողոքարկման իրավունքը**

1. Նավի սեփականատերը կամ օպերատորը, կամ անդամ պետությունում գտնվող նրա ներկայացուցիչն իրավունք ունի բողոքարկելու կալանավորման մասին իրավասու մարմնի կողմից կայացված որոշումը: Բողոքարկման պատճառով կալանավորումը չի հետաձգվում:

2. Անդամ պետություններն այս նպատակով սահմանում եւ կիրառում են համապատասխան ընթացակարգեր՝ իրենց ազգային օրենսդրության համաձայն:

3. Իրավասու մարմինը նավի նավապետին պատշաճորեն տեղեկացնում է 1-ին պարբերության մեջ նշված բողոքարկման իրավունքի մասին:

### *Հոդված 8*

#### **Վարչական համագործակցությունը**

1. Անդամ պետությունները սույն Հրահանգի արդյունավետ կիրարկումն ապահովելու նպատակով անհրաժեշտ քայլեր են ձեռնարկում՝ «Նավերի անվտանգության, աղտոտման կանխարգելման, ինչպես նաեւ նավի վրա կյանքի եւ աշխատանքային պայմանների վերաբերյալ ու Համայնքի նավահանգիստներից օգտվող եւ անդամ պետությունների իրավասության ներքո գտնվող ջրերում նավարկման հետ կապված միջազգային ստանդարտների իրագործման մասին» (նավահանգստի պետական վերահսկողություն) (5) Խորհրդի 1995թ. հունիսի 19-ի 95/21/ԵՀ հրահանգով սահմանված պայմաններին համարժեք պայմաններով իրենց համապատասխան մարմինների, ինչպես նաեւ մյուս անդամ պետությունների համապատասխան իրավասու մարմինների միջեւ համագործակցության ապահովման ուղղությամբ եւ Հանձնաժողովին տեղեկացնում են նախատեսված միջոցների մասին:

2. 4-րդ եւ 5-րդ հոդվածների համաձայն ձեռնարկված միջոցների մասին տեղեկատվությունը հրապարակվում է 95/21/ԵՀ հրահանգի 15-րդ հոդվածի առաջին պարբերությամբ սահմանված ընթացակարգերի համաձայն:

### *Հոդված 9*

#### **«Ավելի բարյացակամ» վերաբերմունքի բացառման մասին դրույթը**

ԱՄԿ թիվ 180 կոնվենցիայի կամ ԱՄԿ թիվ 147 կոնվենցիային կից արձանագրության ստորագրող կողմ չհանդիսացող պետության տարածքում գրանցված կամ նրա դրոշի ներքո նավարկող նավի վրա ստուգում իրականացնելու ընթացքում անդամ պետությունները Կոնվենցիան եւ արձանագրությունն ուժի մեջ մտնելուց հետո անմիջապես ապահովում են, որ այդ նավերի եւ դրանց անձնակազմի նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքն ավելի բարյացակամ չլինի, քան այն նավերի նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքը, որոնք նավարկում են կա՛մ ԱՄԿ թիվ 180 կոնվենցիայի, կա՛մ ԱՄԿ թիվ 147

կոնվենցիային կից արձանագրության, կա՛մ միաժամանակ երկուսի ստորագրող կողմ հանդիսացող պետության դրոշի ներքո:

### *Հոդված 10*

#### **Եզրափակիչ դրույթները**

1. Անդամ պետությունները 2002 թվականի հունիսի 30–ից ոչ ուշ գործողության մեջ են դնում սույն Հրահանգին համապատասխանելու համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը եւ վարչական ակտերը:
2. Երբ անդամ պետություններն ընդունում են 1-ին պարբերության մեջ նշված միջոցները, ապա դրանք պետք է պարունակեն սույն Հրահանգին կատարվող հղում կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Նման հղում կատարելու ձեւերը սահմանվում են անդամ պետությունների կողմից:
3. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ներպետական իրավունքի բոլոր այն դրույթները, որոնք նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում: Հանձնաժողովը դրա մասին տեղեկացնում է մյուս անդամ պետություններին:

### *Հոդված 11*

#### **Ոչ անդամ պետությունների նավերը**

Սույն Հրահանգը անդամ պետության տարածքում չգրանցված կամ ոչ անդամ պետության դրոշի ներքո նավարկող նավերի նկատմամբ կիրառվում է միայն ԱՄԿ թիվ 180 կոնվենցիային եւ ԱՄԿ թիվ 147 կոնվենցիային կից արձանագրությունն ուժի մեջ մտնելու օրվանից:

### *Հոդված 12*

#### **Ուժի մեջ մտնելը**

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու օրը:



## **Հոդված 13**

### **Հասցեատերերը**

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 1999 թվականի դեկտեմբերի 13-ին:

Եվրոպական պառլամենտ

Նախագահ Ն. Ֆոնտեն

Խորհրդի կողմից՝

Նախագահ Ս. ՀԱՍՍԻ

1) ՊՏ C 43, 17.02.1999թ., էջ 16:

2) ՊՏ C 138, 18.05.1999թ., էջ 33:

3) Եվրոպական պառլամենտի 1999 թվականի ապրիլի 14-ի եզրակացություն (ՊՏ C 219, 30.07.1999թ., էջ 240), Խորհրդի 1999 թվականի հուլիսի 12-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 249, 01.09.1999թ., էջ 7) եւ Եվրոպական պառլամենտի 1999 թվականի նոյեմբերի 4-ի որոշում (դեռ չի հրապարակվել պաշտոնական տեղեկագրում):

4) ՊՏ L 167, 02.07.1999թ., էջ 37:

5) ՊՏ L 157, 07.07.1995թ., էջ 1: 98/42/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 184, 27.06.1998 թ., էջ 40):

ՀԱՎԵԼՎԱԾ I

**ՆԱՎԻ ՎՐԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՂՅՈՒՍԱԿԻ ՁԵՎԱՆՄՈՒՇ**

Նավի անվանումը՝

Նավի դրոշը՝

ԾՄԿ համարը (եթե գոյություն ունի)

Աղյուսակի վերջին թարմացում՝

( ) -ը

( ) էջերից:

Առավելագույն աշխատաժամերը կամ հանգստի նվազագույն ժամերը կիրառելի են հետեւյալի համաձայն՝ \_\_\_\_\_ (ազգային իրավունք կամ կանոնակարգ) մշակված «Ծովագնացների աշխատաժամերի եւ նավերի աշխատակազմերի համալրման մասին» ԱՄԿ 1996թվականի (թիվ 180) կոնվենցիայի եւ ցանկացած կիրառելի կոլլեկտիվ համաձայնագրի համաձայն, որը գրանցված է, կամ որի կիրառությունը թույլատրված է նշված կոնվենցիայի եւ «Ծովագնացների վերապատրաստման, հավաստագրման եւ հերթապահության վերաբերյալ ստանդարտների մասին» 1978 թվականի միջազգային կոնվենցիայի համաձայն՝ փոփոխված (ԾՎՀՀ կոնվենցիա) (2):

Առավելագույն աշխատաժամեր կամ հանգստի նվազագույն ժամեր (3)

Այլ պահանջներ՝

Պաշտոնը/կոչումը <sup>(4)</sup>	Ծրագրված ամենօրյա աշխատաժամեր՝ ծովում		Ծրագրված ամենօրյա աշխատաժամեր՝ նավահանգստում		Մեկնաբանություններ	Ամենօրյա աշխատաժամերի եւ հանգստի ժամերի ընդհանուր թիվը	
	Հերթապահություն (-ից — -ը)	Հերթապահության հետ չառնչվող պարտականություններ (-ից —ը) <sup>(5)</sup>	Հերթապահություն (-ից — -ը)	Հերթապահության հետ չառնչվող պարտականություններ (-ից —ը)		Ծովում	Նավահանգիստներում

Նավապետի ստորագրությունը

- (1) Այս ձեւանմուշի մեջ օգտագործված եզրույթները պետք է հանդիպեն նավի աշխատանքային լեզվում կամ լեզուներում եւ անգլերենով:
- (2) ԱՄԿ թիվ 180 կոնվենցիայի եւ ԾՎՀՀ կոնվենցիայից ընտրված քաղվածքները տես՝ թղթի դարձերեսին:
- (3) Անհրաժեշտության դեպքում ջնջել:
- (4) Այդ պաշտոնների/կոչումների դեպքում, որոնց մասին նաեւ նշված են աշխատակազմի անվտանգության մասին փաստաթղթում, օգտագործվող եզրույթները պետք է համապատասխանեն այդ փաստաթղթում օգտագործված եզրույթներին:
- (5) Հերթափոխային անձնակազմի դեպքում մեկնաբանությունների բաժինը կարող է օգտագործվել արտապլանային աշխատանքի դեպքում աշխատաժամերի ենթադրվող թիվը նշելու համար եւ ցանկացած նման ժամերի մասին նշում պետք է ներառվի աշխատաժամերի ընդհանուր թվի մասին սյունակում:

## ԱՄԿ ԹԻՎ 180 ԵՎ ԾՎՀՀ ԿՈՆՎԵՆՑԻԱՆԵՐԻՑ ԸՆՏՐՎԱԾ ՏԵՔՍՏԵՐ

### ԱՄԿ ԹԻՎ 180 ԿՈՆՎԵՆՑԻԱ

#### Հոդված 5

1. Աշխատաժամերի կամ հանգստի ժամերի սահմանաչափերը հետեւյալներն են՝

ա) աշխատաժամերի առավելագույն թիվը, որը չպետք է գերազանցի՝

i) 14 ժամ՝ ցանկացած 24-ժամյա ժամանակահատվածում եւ

ii) 72 ժամ՝ ցանկացած յոթնօրյա ժամանակահատվածում կամ

բ) հանգստի ժամերի նվազագույն թիվը չպետք է պակաս լինի՝

i) 10 ժամ՝ ցանկացած 24-ժամյա ժամանակահատվածում եւ

ii) 77 ժամ՝ ցանկացած յոթօրյա ժամանակահատվածում:

2. Հանգստի ժամերը կարող են բաղկացած լինել ոչ ավելի, քան երկու ժամանակահատվածից՝ որոնցից մեկը պետք է ներառի առնվազն 6 ժամ տեւողություն եւ հանգստի հաջորդական ժամանակահատվածների միջեւ ընդմիջումը չպետք է գերազանցի 14 ժամը:

6. 1-ին եւ 2-րդ պարբերություններում նշվածներից եւ ոչ մեկը չի խոչընդոտում, որպեսզի անդամ պետությունն ունենա ազգային իրավունք կամ կանոնակարգ, կամ ընթացակարգ, որի համաձայն իրավասու մարմինը թույլ կտա գրանցել սահմանված սահմանաչափերի առումով բացառություններ ներառող կոլլեկտիվ համաձայնագրեր: Նման բացառությունները հնարավորինս ներառում են սահմանված ստանդարտները, սակայն դրանցում կարող են հաշվի առնվել ավելի հաճախակի կամ ավելի երկար ժամանակ ենթադրող արձակուրդներ կամ դրանցով կարող է նախատեսվել արտարձակուրդ՝ հերթապահ ծովագնացների կամ կարճատեւ ճամփորդությունների համար նախատեսված նավերի վրա աշխատող ծովագնացների համար:

#### Հոդված 7

1. Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի վնասում նավապետի իրավունքը պահանջելու, որ նավաստին ցանկացած ժամի աշխատանք կատարի նավի, նավի վրա գտնվող անձանց կամ բեռների անմիջական անվտանգության համար կամ այլ նավերին կամ ծովում գտնվող անձանց օգնություն ցուցաբերելու նպատակով:

3. Որքան հնարավոր է շուտ, նորմալ իրավիճակը վերականգնելուց հետո նավապետն ապահովում է, որ իր աշխատանքը հանգստի համար նախատեսված ժամանակահատվածում իրականացրած յուրաքանչյուր նավաստու հանգստի համար համապատասխան ժամանակ տրամադրվի:

### **ԾՎՀՀ կոնվենցիա**

*ԾՎՀՀ ծածկագրի A-VU/1 բաժին (պարտադիր)*

1. Ցանկացած անձի, ով ստանձնել է հերթապահություն իրականացնելու պարտավորություն կամ հերթապահ ծովագնացի ցանկացած 24-ժամյա ժամանակահատվածի ընթացքում տրամադրվում է առնվազն 10 ժամ հանգստի ժամանակ:

2. Հանգստի ժամերը կարող են բաղկացած լինել ոչ ավելի, քան երկու ժամանակահատվածներից, որոնցից մեկը՝ առնվազն վեց ժամ տեւողությամբ:

3.1-ին եւ 2-րդ պարբերություններով սահմանված հանգստի ժամանակահատվածներն անհրաժեշտ չէ, որ պահպանվեն արտակարգ իրավիճակի կամ վարժանքի, կամ շահագործման այլ պայմանների դեպքում:

4. Անկախ 1-ին եւ 2-րդ պարբերությունների դրույթներից՝ 10-ժամյա նվազագույն ժամանակահատվածը կարող է նվազեցվել մինչեւ ոչ պակաս, քան 6 հաջորդական ժամերի, պայմանով, որ նման ցանկացած նվազեցումը չպետք է ներառի երկու օրվանից ավելի ժամանակահատված եւ որ ամեն յոթօրյա ժամանակահատվածի ընթացքում պետք է տրվի 70 ժամից ոչ պակաս հանգստի ժամանակ:

5. Կառավարման մարմինները պետք է պահանջեն, որ հերթապահության ցուցակը փակցվի հեշտ հասանելի վայրում:

*ԾՎՀՀ ծածկագրի B-VU/1 բաժին (Ուղեցույց)*

3. VIII/1 կարգավորումը կիրառելիս պետք է հաշվի առնել հետեւյալը՝

1. այն դրույթներով, որոնք նախատեսված են գերհոգնածությունից խուսափելու համար, պետք է ապահովվի սահմանաչափը գերազանցող կամ անհիմն աշխատանքային ժամերի կիրառման բացառում: Մասնավորապես, A-VIII/1 բաժնով սահմանված հանգստի նվազագույն ժամանակահատվածների դեպքում, չպետք է ենթադրել, որ մյուս բոլոր ժամերը պետք է նվիրվեն հերթապահությանը կամ այլ պարտականությունների կատարմանը:

2. որ արձակուրդների հաճախականությունը եւ տեւողությունը, ինչպես նաեւ արտարձակուրդի տրամադրումը էական գործոններ են՝ ժամանակի ընթացքում գերհոգնածության առաջացումը կանխելու համար:

3. դրոյթները կարող են տարբեր լինել կարճատեւ ճամփորդությունների համար նախատեսված նավերի դեպքում, պայմանով, որ ձեռնարկվում են անվտանգության հատուկ միջոցառումներ:

**ԾՈՎԱԳՆԱՑՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԺԱՄԵՐԻ ԵՎ ՀԱՆԳՍՏԻ ԺԱՄԵՐԻ  
ԳՐԱՌՄԱՆ ՁԵՎԱՆՄՈՒՇ**

2  
Էջերից՝  
1-ինը

Նավի անվանումը՝	ԾՄԿ համարը (եթե գոյություն ունի)	Նավի դրոշմ՝	Այո	□
Ծովագնաց (ամբողջակա ն անունը)		Պաշտոնը /կոչումը՝		
Ամիսը եւ տարին _____		Հերթապ ահ (²)		

**Աշխատաժամերի/ հանգստի ժամերի գրառումը (³)**

Խնդրվում է անհրաժեշտության դեպքում «X» նշանով, շարունակական կամ աղեղանման գծով նշել աշխատանքի եւ հանգստի ժամանակահատվածները:

**ԼՐԱՑՆԵԼ ԴԱՐՁԵՐԵՍԻ ԱՂՅՈՒՍԱԿԸ**

Ազգային իրավունքը, կանոնակարգերը եւ (կամ) կոլեկտիվ համաձայնագրերը, որոնցով կարգավորվում են աշխատաժամերի կամ հանգստի նվազագույն ժամերի առնչությամբ սահմանափակումները, կիրառվում են այս նավի նկատմամբ՝ \_\_\_\_\_

Ես համաձայն եմ, որ այս գրառումը ճշգրտորեն արտացոլում է համապատասխան ծովագնացի աշխատած աշխատաժամերը եւ նրան տրամադրված հանգստի ժամերը:

Նավապետի կամ այն անձի անունը, ով նավապետի կողմից լիազորված է ստորագրելու այս գրառումը՝ \_\_\_\_\_

Նավապետի կամ նրա կողմից լիազորված անձի ստորագրությունը \_\_\_\_\_ Ծովագնացի ստորագրությունը

Սույն գրառման մեկ օրինակը պետք է տրվի ծովագնացին:

Սույն ձեւաթուղթը, սահմանված ընթացակարգերի համաձայն, ենթակա է ուսումնասիրության եւ հաստատման՝

\_\_\_\_\_ (հրավասու մարմնի անունը) կողմից

f) Այս ձեւանմուշի մեջ օգտագործված եզրույթները պետք է ներառվեն նավի աշխատանքային լեզվում կամ լեզուներում եւ անգլերենով:

(<sup>2</sup>) Նշել՝ հարկ եղած դեպքում:

(<sup>3</sup>) Ջնջել՝ հարկ եղած դեպքում





